Համազասպ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԿԱՁՈՐԻ ԱՄՐՈՑ-ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

2011թ. Հայկաձորի հուշարձանախմբի պեղումները իրականացվել են ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ու Հնագիտության և ազգագրության ինստիտուտի համատեղ արշավախմբի կողմից (Հ.Խաչատրյան, Լ.Եգանյան, Լ. Պետրոսյան): Աշխատանքները, ըստ նախանշված ծրագրի, իրականացվել են վերին դարավանդի ելուստի վրա գտնվող ամրոց-բնակավայրում:

Ուշ ուրարտական ամրոց-բնակատեղիում 2009թ. պեղումների արդյունքում հայտնաբերվել էր մի սենյակ, որի պատերը վերաբերում էին երրորդ շինարարական հորիզոնին: Պեղումների ավարտից առաջ սենյակի հյուսիսային պատի հետևում դրվեց 2x1մ չափերով հետախուզական փոսորակ, որի հատակին, մոտ 2մ խորության մեջ բացվեց ամրոց-բնակավայրի վաղ շրջանին վերաբերող սալահատակ:

2010թ., ըստ նախանշված ծրագրի, պեղվեց նախկինում հայտնաբերված կառույցի հյուսիսային կողմը՝ 6մx6մ չափերով: Պեղումների արդյունքում բացվեց հյուսիս-հարավ ուղղությամբ մի պատ: Պեղումներով պատի երկու կողմերում հայտնաբերվեցին երկու կացարաններ, որոնցից արևելյանում բացվեց միջնապատին միացող կացարանի հարավային պատը: Արևմտյան կողմում հայտնաբերվեցին ստորին շերտի (առաջին շինարարական հորիզոն) կավածեռի հատակը և դրան վերաբերող մոտ 1մ հզորությամբ մշակութային շերտը: Ամենայն հավանականությամբ, այստեղ կյանքը ինչ-որ պահ դադարել է, և մշակութային շերտի վրա առաջացել էր մոտ 20-30սմ հզորությամբ չեզոք շերտ: Այնուհետև կյանքը վերսկսվում է և ամուր տափանված մի նոր գետին է գոյանում, որն իր մակարդակով համապատասխանում է 2009թ. պեղված հարավային սենյակի պատերի հիմքերի մակարդակին:

2011 թվականին պեղավայրը դեպի հյուսիս, արևելք և արևմուտք ընդարձակվեց 3- ական մետրով (նկար 1, չափագրություն): Պեղումներով պարզվեց, որ միջնապատը և արևելյան կացարանի հարավային պատը շարունակվում են:

Արևմտյան կացարանի վերին շերտում հայտնաբերվեց արևելք-արևմուտք շեղակի ուղղություն ունեցող, վերջին շինարարական հորիզոնին վերաբերող պատի հատված: Այն բաղկացած է 2 շարքից, շարունակվում է դեպի արևմուտք, իսկ արևելյան կողմում՝ ընդհատվում, ամենայն հավանականությամբ, դրա շարունակությունը քանդվել է հողաբարելավման հետևանքով (նկար 2): Պատի երկու կողմերում էլ լավ պահպանվել են կավածեփ և տափանված հատակները, որոնց մեջ:



հայտնաբերվել են երկուական ամբարներ: Դրանք ունեն հատած կոնի ձև և 1,2մ-1,3մ խորություն: Ամբարները երկու տիպի են՝ քարաշար պատերով և առանց դրանց: Բոլոր ամբարները վերին մասում ավարտվում են քարաշար կեղծ թաղով և ծածկված էին խուփի դեր կատարող սալաքարերով: Ամբարների ստորին տրամագիծը 1մ-1,2մ է:

Նկ. 2

Երկու քարաշար պատերով ամբարները հայտնաբերվել են փակված վիճակում և, որքան էլ տարօրինակ էր, դրանք դատարկ էին (նկար 3): Ամբարներից հայտնաբերվել են ընդամենը խեցու մի քանի բեկորներ և փոքր քանակությամբ փայտածխի մնացորդներ: Տպավորությունն այնպիսին է, որ դրանք, գուցե բնակավայրը լքելուց առաջ, հատուկ դատարկվել են բնակիչների կողմից: Հետաքրքրականն այն է,որ նման պատկեր է դիտվել նաև Ազատանի համաժամանակյա բնակավայրի նույնատիպ ամբարների պեղումների ընթացքում: Առայժմ դժվար է բացատրել այս երևույթի պատճառները, սակայն այս հուշարձանների հետագա պեղումները հնարավորություն կընձեռեն երևույթը պատմական համատեքստում մեկնաբանելու համար:

Պեղավայրի երկու կացարանների բաժանարար պատը հյուսիսային կողմում մասամբ քանդված է: Ամենայն հավանականությամբ, տվյալ համալիրի վերջին շրջանում, երբ կառուցվում են վերին շինարարական հորիզոնին պատկանող հիշատակված պատը և ամբարները, արևելյան կողմում նոր շինարարություն չի իրականացվում: Միջնապատի վերին հատվածում նկատելի են տափանված կավե հատակի հետքերը: Ամբարներից մեկը այնքան կիպ է փորված պատին, որ դրան կլորավուն ձև տալու համար պատի խանգարող քարերը տեղաշարժվել կամ հանվել են: Պատի վրա՝ հյուսիսային մասում, հայտնաբերվեց արևելք-արևմուտք ուղղությամբ մի շարվածք, որը հուշում է, որ այստեղ մի նոր անցում է կառուցվել (նկ.4): Ցավոք, վերին շերտը հողաբարելավման աշխատանքների հետևանքով բավականին խաթարված է, և արևելյան կողմում բակի կամ մեկ այլ կառույցի գոյության մասին կարելի է ենթադրել միայն այս անցումից փոքրինչ հեռու հայտնաբերված նույն ուղղությամբ աստիճանաձև շինվածքի հայտնաբերումով (նկ. 5):

Նկ. 3

Ներկա վիճակում թե՛ արևելյան և թե՛ արևմտյան կացարանները բավականին մեծ են, և եթե դիտարկենք նաև պեղավայրի հարավային կողմում վերին շինարարական հորիզոնին վերաբերող սենյակի տարածքը, ապա արևմտյան սրահի հյուսիս-հարավ երկարությունը հյուսիսային կողմում անավարտ վիճակով հասնում է մոտ 12 մետրի, իսկ լայնքերը առանց արևելյան և արևմտյան եզրափակող պատերի՝ մոտ 6 մետրի: Այսպիսի մեծ չափեր ունեն նաև Բենիամինի անտիկ դաստակերտի 3-րդ տեղամասի մ.թ.ա. 5-րդ դարով թվագրվող և նույնպիսի լայն պատով բաժանված երկու

սրահները: Նման չափերի մեծ սրահները երևի հատկանշական են մ.թ.ա. 6-5-րդ դարերի համար:

2011 թվականին այս հատվածի պեղումներով հստակեցվեցին բնակավայրի շերտագրությունը և շինարարական հորիզոնները: Ըստ ներկա դիտարկման՝ առկա են երեք շինարարական հորիզոններ: Սրանցից առաջինը հյուսիսից հարավ ուղղությամբ ընթերցվում է արևմտյան սրահի պեղված մասի առաջին հատակի մեջ և տակ: Այս հորիզոնը համապատասխանում է բնակավայրի ստորին շերտին, որը մինչև երկու սրահների ամբողջացումը չի պեղվելու: Շինարարական երկրորդ հորիզոնը նշված սրահները տարանջատող միջնապատի կառուցումն է, որը, ինչպես ցույց տվեցին պատի փլուզված մասի մաքրման աշխատանքները, դրված է կավածեփ հատակի վրա: Այս հորիզոնին են վերաբերում մշակութային երկրորդ և երրորդ շերտերը, որոնք տարանջատված են 0,2մ-04մ տարբերությամբ իրար հաջորդող 2 հատակներով: Այնուհետև նկատվում է կենսագործունեության կարճատև ընդհատում, և վերին շինարարական հորիզոնի կառույցներն ու հորերը հատակագծմամբ կապ չունեն նախորդող կառույցների հետ:

Ստորին շերտի և շինարարական հորիզոնի դեռևս պեղած չլինելու պատճառով առայժմ դժվար է ստույգ թվագրել դրանք, սակայն բեկորային խեցեղենի որոշ նմուշներ ձայնակցում են մ.թ.ա. 9-8-րդ դարերի տեղական խեցեղենի հատիկանախաշ, անփայլ մակերեսով օրինակների հետ: Սնացած խեցեղենը մեծ մասամբ տարբեր չափի կարասների, կճուճների, ձձումների, երկկանթ անոթների սև և մոխրագույն բեկորներ են: Հատկանշական է, որ այս շերտից պեղվածքաց ամանների բեկորները շատ փոքր թիվ են կազմում: Դրանց մեջ առավել շատ են շուրթին մատենքանախշով սաջերի և տապակների բեկորները:

Խեցեղենով առավել հարուստ է վերին շերտը: Այստեղից հայտնաբերված նյութերը բազմազան են: Մեծ քանակություն են կազմում տարբեր չափերի թասերի բեկորները: Դրանք հիմնականում ուղղահայց կողերով, կողերին իրար հաջորդող գոտիներով և ակոսառվակներով հարդարված, բաց մոխրագույն կամ շագանակագույն անոթներ են: Ի տարբերություն մ.թ.ա. 9-8-րդ դարերի նմանատիպ անոթների կլորավուն ուռուցիկ գոտիների, սրանց գոտիները սուր են (տախտակ 1, նկար 4-9): Կան նաև շուրթից դեպի ներսուկ կորաձև անցմամբ փոքր-ինչ դեպի դուրս կամ ներս հակված կլորավուն շուրթով անոթներ (տախտակ 1, նկար 1-3): Բաց ամանների մեջ կա նաև փոքր-ինչ փռված շուրթով, ներսի կողմում՝ շուրթի տակ, երեք շարք ալիքաձև զարդանախշով ափսե (տախտակ 1, նկար 4-10): Այս բոլոր անոթները կարծես կրկնում են ավելի վաղ ժամանակաշրջանի հայտնի ձևերը, սակայն տարբերվում են գույնով, վատ փայլեցմամբ, վերադիր գոտիների սուր, անկյունաձև եզրերով: Իսպառ բացակայում են փայլանախշով անոթները;

Վերին շերտի խեցեղենի հարդարման և զարդանախշման տարրերի մեջ բացակայում են մ.թ.ա. 7-րդ դարին բնորոշ եղուստավոր կանթերը, կավից կոճակները և այլն: Անոթների զարդանախշման մեջ հատիկանախշին փոխարինելու են գալիս գծային եղևնանախշով գոտիները (տախտակ 2, նկար 1-10): Նման զարդանախշված անոթներ հայտնի են Օշականի[1], Լոռի բերդի[2], Աղթամիրի[3] կացարանների



Նկ. 7



Նկ. 6

հետուրարտական ժամանակաշրջանին վերաբերող շերտերից: Նյութերի քննությունը մեզ թույլ է տալիս ամրոց-բնակավայրի կացարանների վերին շերտը և շինարարական հորիզոնը թվագրել մ.թ.ա. 6-րդ դարով: Այս թվագրման օգտին է ծառայում նաև այն, որ հայտնաբերված խեցեղենի մեջ չկան մ.թ.ա. 5-րդ դարին բնորոշ անգոբապատ, առավել ևս կարմիր գույնի նմուշներ: Իսկ պեղված երկրորդ շերտը թվագրել մ.թ.ա. 8-րդ դարով: Առայժմ մ.թ.ա. 7-րդ դարին բնորոշ ցայտուն արտահայտությամբ խեցեղենի բացակայությունը թույլ է տալիս ենթադրել, որ երկրորդ և երրորդ շինարարական հորիզոնների միջանկյալ շերտը և բնակավայրի կենսագործունեության ընդհատումը համապատասխանում է մ.թ.ա. 7-րդ դարին:

2011թվականի պեղումների ընթացքում որոշ հետախուզական աշխատանքներ իրականացվեցին նաև ամրոցի արևմտյան պարսպի արտաքին կողմում: Այստեղ բացվեց պարսպի մի հատվածը աշտարակի անկյան մասում: Ինչպես ցույց տվեցին պեղումները, պարիսպը պահպանվել է 3մ բարձրությամբ: Այն ստորին մասում կառուցված է խոշոր տուֆե և բազալտե քարերից, իսկ բարձրանալուն զուգընթաց քարերի չափերը գնալով փոքրանում են: Պարսպից աշտարակի դուրս եկած մասի երկարությունը կազմում է մոտ 4մ: Պարսպից 5,45մ հեռավորությամբ հայտնաբերվեց նրան զուգահեռ երկշար մի պատ, որը հյուսիսային կողմում ունի անկյուն և միանում է

---

[1] *Есаян С.А., Калантарян А.А., Ошакан 1, Ер., 1988, Таблице XXI 6,9,11, XXIII 7, 9,11, XXXI 4*

[2] *Դեվեջյան Ս., Լոռի բերդ II, Եր., 2006թ, նկ. 130-1,5, 127-8,*

[3] *Հարությունյան Ի., Աղթամիրի ուրարտական և աքեմենյան ժամանակաշրջանների խեցեղենը, Հուշարձան, տարեգիրք Է, Եր., 2011թ, էջ 59, աղ. 4 նկ 5, էջ 61, աղ. 6*

մոտ 3մ հեռավորությամբ գտնվող, ավելի ուշ կառուցված միաշար մի այլ զուգահեռ պատի (նկար 6):

Պարսպի մաքրման աշխատանքների ընթացում հայտնաբերվեցին ինչպես մ.թ.ա. 1-ին հազարամյակի 1-ին կեսին վերաբերող, այնպես և անտիկ ու միջնադարյան խեցեղենի բեկորներ: Առանձնահատուկ ուշադրության է արժանի միջնադարյան խեցու մի բեկորը, որի վրա վերադիր արված են հայերեն Ա և մեկ ուրիշ տառ (նկար 7): Երկրորդ տառը ամենայն հավանականության կապգիր է՝ *Ա* և *Ջ* տառերի միակցում, որը կարելի է կարդալ *ԱՋ* :Վերադիր տեքստով խեցեղեն մեզ հայտնի չէ: Եթե հետագա պեղումներով հայտնաբերվեն նույն անոթի այլ բեկորներ, ապա կառաջանա առանձին ուսումնասիրության անհրաժեշտություն:

Ամրոցի պեղումներով հայտնաբերվել են բազմաթիվ նյութեր, այդ թվում՝ քարից և ոսկրից աշխատանքային գործիքներ, խեցեղենի բազմապիսի նմուշներ: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում առանց նստուկի, ծակոտկեն բուրանոթների բեկորները, որոնց համադրությամբ պարզվում է, որ դրանք պատկանում են վերին կառույցում եղած ձևով միանման չորս տարբեր անոթների: Վերին շերտի հատակի վրայից հայտնաբերվել են վանակատից 2 նետասլաքներ, կա նաև քարի դարին վերաբերող քերիչ՝ պատրաստված մոխրագույն բազալտից (նկար 8,9):

Նկ. 8


Նկ. 9

Հայկաձորի 2011 թ. պեղումներով բացված կառույցները չափագրվել և կոնսերվացվել են: Պեղումներից հայտնաբերված բոլոր նյութերը տեղափոխվել են Շիրակի երկրագիտական թանգարան և գտնվում են կամերալ մշակման փուլում:

ՏԱԽՏԱԿ 1

ՏԱԽՏԱԿ 2



РАСКОПКИ КРЕПОСТИ-ПОСЕЛЕНИЯ АЙКАДЗОР В 2011 г.

____ *А. Хачатрян* ____

____ *Резюме* ____

Раскопки крепости-поселения Айкадзора 2011 года велись на двух участках:

1. продолжались раскопки жилого комплекса;
2. был проведен зондаж на внешней стороне западной крепостной стены.

В поселении раскоп был расширен по 3м с восточной, западной и северной сторон. Выяснилась, что южная стена восточного помещения продолжается на восток. На западной стороне, при расширении, в верхнем слое была обнаружена двухрядная стена каменной кладки, относящаяся к последнему строительному горизонту. В обеих сторонах стены, в глинобытном полу были обнаружены конусообразные зерновые ямы, в верхней части перекрытых ложными сводами из камня. Амбары были бережно закрыты каменными плитами, но, к нашему удивлению, все они были пусты.

Раскопками были уточнены стратиграфия и строительные горизонты данных помещений. Некоторые материалы верхнего слоя, в том числе светлосерая и коричневая керамика с штриховым елочным орнаментом, дают возможность верхний слой датировать 6-ым веком до н.э. Нижние слои помещений, по датировке обнаруженной керамики относятся к 9-8 в.в. до н.э. Наличие стерильного слоя между 2-ым и 3-ым строительными горизонтами, дает возможность этот слой отнести 7-ому веку до н.э.

В 2011г. была очищен небольшой участок крепостной стены с выступом контрфорса. Как показали раскопки, высота крепостной стены составляет 3м, а выступ контрфорса-3,8м. Параллельно крепостной стене, на растоянии 5,8м и 8,8м были обнаружены стены какого-то помещения.

Раскопками были обнаружены каменные и костяные орудия труда, обсидиановые наконечники стрел, большое количество разнообразной керамики и скребок из серого базальта верхнего палеолита.